Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՌԵԿՏՈՐ

Թիվ 4153-Լ 25.12.2018թ.

ՀՐԱՄԱՆ

ԱՂԱՎՆԱԾՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի /այսուհետ՝ Համալսարան/ կանոնադրության 54-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Համալսարանի Աղավնաձորի ուսումնական բազայի կանոնադրությունը:

2. Հանձնարարել Համալսարանի Լրատվության և հանրության հետ կապերի վարչությանը և Անձնակազմի հաշվառման բաժնին կատարել սույն հրամանից բխող անհրաժեշտ գործողությունները:

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Հաստատված է

«Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական
մանկավարժական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
25.12.2018 թվականի
թիվ 4153 հրամանով

Ռեկտոր Ռ.Կ. Միրզախանյան

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երևան 2018

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) Աղավնաձորի ուսումնական բազան (այսուհետ՝ Բազա) հանդիսանում է Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումը:

2. Բազան ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Համալսարանի ռեկտորի հրամանով՝ Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով:

3. Բազան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի ռեկտորի հրամաններով, Համալսարանի կառավարման մարմինների որոշումներով, սույն կանոնադրությամբ:

4. Բազան ունի իր անվամբ ձևաթուղթ:

II. ԲԱԶԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5. Բազայի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Համալսարանի ռեկտորը, իսկ համապատասխան վերահսկողությունը՝ Համալսարանի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորը:

6. Բազան անմիջապես ղեկավարում է Բազայի պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է Համալսարանի ռեկտորը:

7. Բազայի պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Համալսարանի ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին և ռեկտորին:

8. Բազայի պետի իրավունքներն են՝

1) Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր.

2) ներկայացնել առաջարկություններ Համալսարանի ռեկտորին՝ Բազայի աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

3) ներկայացնել առաջարկություններ Բազայի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով.

4) ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

9. Բազայի պետի պարտականություններն են՝

1) ղեկավարել և վերահսկել Բազայի ընթացիկ գործունեությունը.

2) ստորագրել Բազայի կողմից ներկայացվող փաստաթղթերը, կազմել Բազայի գործառույթների շրջանակում զեկուցագրեր, տեղեկանքներ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր.

3) մասնակցել Համալսարանի ռեկտորի կողմից հրավիրվող համապատասխան նիստերին, խորհրդակցություններին.
4) կատարել աշխատանքի բաժանում Բազայի աշխատողների միջև.
5) հսկել Բազային ամրակցված գույքի պատշաճ պահպանումը և կրել պատասխանատվություն ոչ պատշաճ կատարման համար.
6) ժամանակին ներկայացնել Բազայում ծագող տեխնիկական և այլ խնդիրները.
7) ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

10. Բազայի պետի բացակայության ժամանակահատվածում նրան փոխարինում է Բազայի աշխատողներից որևէ մեկը՝ Համալսարանի ռեկտորի հրամանի հիման վրա:

11. Բազայի պետը պատասխանատու է Բազայի կողմից իրականացվող աշխատանքների որակի և Բազայի առջև դրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծման համար:

III. ԲԱԶԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Բազայի խնդիրներն են՝
1) ապահովել Համալսարանի ուսանողների, աշխատողների և այլ անձանց հանգիստը, ինչպես նաև ուսանողների պրակտիկայի կազմակերպումը:

13. Բազան իր խնդիրների իրականացման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝
1) ապահովել Համալսարանի ուսանողների պրակտիկան՝ ըստ սահմանված ուսումնական պլանների, կոնֆերանսների, սեմինարներ և այլ միջոցառումների պատշաճ անցկացումը.
2) պատշաճ կազմակերպել ուսանողների, աշխատողների և այլ անձանց հանգիստը.
3) հսկել Բազայում գտնվող անձանց սննդի պատշաճ կազմակերպման նկատմամբ.
4) ապահովել ջրի սպասարկման, կաթսայատան և էլեկտրաէներգիայի տեխնիկական սարքերի անխափան աշխատանքը
5) վերահսկել Բազայում սանիտարահիգիենիկ և անվտանգության կանոնների պահպանումը.
6) իր իրավասությունների շրջանակներում և Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

IV. ԲԱԶԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

14. Բազայի աշխատողներն աշխատանքի ընդունվում և ազատվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:

15. Բազայի աշխատողները կատարում են իրենց անմիջական ղեկավարի հանձնարարականները, աշխատանքային պայմանագրով (առկայության դեպքում՝ պաշտոնի անձնագրով կամ աշխատատեղի նկարագրով), ներքին կարգապահական կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պարտականությունները և պատասխանատու են դրանց կատարման համար: Բազայի աշխատողներն իրականացնում են Բազայի գործառույթներից բխող աշխատանքներ: Բազայի աշխատողները օգտվում են ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, աշխատանքային պայմանագրով (առկայության դեպքում պաշտոնի անձնագրով կամ աշխատատեղի նկարագրով) ամրագրված իրավունքներից:

16. Բազայի աշխատողները պարտավոր են ենթարկվել ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, Համալսարանի ներքին կարգապահական կանոններին, ինչպես նաև աշխատանքային էթիկայի կանոններին:

17. Բազայի կառուցվածքը և հաստիքակազմը հաստատվում և փոփոխվում է Համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով՝ ռեկտորի հրամանով:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն կանոնադրությունը, դրա փոփոխությունները և լրացումները հաստատվում են Համալսարանի ռեկտորի հրամանով: